«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖԱԿՈՒԼՏԵՏ

# Գ Ո Ր Ծ ՈՒ Ն Ե ՈՒ Թ Յ Ա Ն
# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԻՋԵՎԱՆ 2024

# Ռազմավարական նպատակ 1
# Բարձրորակ կրթություն

## Ընդունելություն

- Ֆակուլտետը 2023-24 ուստարում առկա ուսուցման համակարգում ունի **346** ուսանող, հեռակա ուսուցման համակարգում՝ **215**:
- «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագիրի վճարովի համակարգի պլանային **25** տեղերի համար 2023-24 ուսումնական տարում դիմել և առաջին հայտով ընդունվել է **19** դիմորդ:

Նշված ժամանակահատվածներում միջազգային ուսանողների ներգրավվածություն ֆակուլտետը չի ունեցել:

# Ռազմավարական նպատակ 1
# Բարձրորակ կրթություն

## Ընդունելություն

*ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԱՅՑԵՐ՝*

- *Իջևանի Պ. Տէվէճեանի անվան քոլեջ*
- *Աչաջրի միջն. դպրոց*
- *Այգեհովիտի միջն. դպրոց*
- *Խաշթառակի միջն. դպրոց*
- *Հովքի միջն. դպրոց*
- *Ծաղկավանի միջն. դպրոց*
- *Սարիգյուղի միջն. դպրոց*
- *Դիլիջանի ավագ և հիմն. դպրոցներ*

ԱԿՆԱՐԿԱՅԻՆ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# Ռազմավարական նպատակ 1
# Բարձրորակ կրթություն

## Կրթական ծրագրեր

### Առկա բակալավր

- *Պատմություն*
- *Հայոց լեզու և գրականություն*
- *Անգլերեն և գրականություն*
- *Ֆրանսերեն և գրականություն*
- *Ռուսաց լեզու և գրականություն*
- *Հոգեբանություն*
- *Տարրական մանակարժություն և մեթոդիկա*

**Մշտադիտարկվել են 2022-2024թթ.**

### Հեռակա բակալավր

- *Պատմություն*
- *Հայոց լեզու և գրականություն*
- *Տարրական մանկավարժություն և մեթոդիկա*
- *Հոգեբանություն*

- Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա

**19 ուսանող**

# Ռազմավարական նպատակ 1
# Բարձրորակ կրթություն

## Առաջադիմություն

Ուսման առաջադիմության միջին (%)




ԵՊՀ ԻՄ –ի «Տարվա լավագույն ուսանող» ամենամյա մրցույթում պատվավոր երկրորդ տեղն է զբաղեցրել «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրի III կուրսի ուսանող *Նազելի Եսայանը*

Կրթաթոշակներ → 63

# Ռազմավարական նպատակ 1
# Բարձրորակ կրթություն

## Ա կ ա դ ե մ ի ա կ ա ն  հ ա մ ա կ ա զ մ

**4 ամբիններ**

- Հայոց պատմության և հասարակագիտության
- Հայոց լեզու և գրականություն
- Մանկավարժության և հոգեբանություն
- Օտար լեզուների

**91**
աշխատակից

**85**
դասախոս

- **30** հիմնական
- **35** համատեղությամբ
- **20** ժամավճարով

**գիտական աստիճանով**

Գ.դ., պրոֆեսոր - **6**

Գ.թ., դոցենտ - **40**

# Ռազմավարական նպատակ 2
# Գիտություն և նորարարություն

## Գիտական ակտիվություն

- **5** ուսումնական ձեռնարկ
- **72** հոդված
- 2 մեթոդական ձեռնարկ

## Գիտաժողովներ

- 7 հանրապետական
- 14 միջազգային

## Դրամաշնորհներ

- 1 ներքին
- 1 միջազգային

# Ռազմավարական նպատակ 3
# Հանրային ներգրավում

## Շրջանավարտներ՝

**Առկա-251 հեռակա -164**

2024թ.-ի կարմիր դիպլոմ ստացել է առկա ուսուցման **19** ուսանող, հեռակա ուսման՝ **1** ուսանող

# Գործողությունների պլանի կատարողական

## Հաջողություններ

1. Ռազմավարական ծրագրի հիման վրա մշակված գործողությունների տարեկան պլանին համապատասխան գործունեություն:
2. Տարածաշրջանի դիմորդների կողմից և աշխատաշուկայում պահանջված, մշտադիտարկված և վերանայված վերջնարդյունքներով կրթական ծրագրի իրականացում:
3. Moodle առցանց ուսուցման համակարգի կիրառում ֆակուլտետի բոլոր դասախոսների կողմից:
4. Բարձրակարգ պրոֆեսորադասախոսական կազմ, որում ներգրավված են նաև մասնաճյուղի շրջանավարտներ:
5. Ակտիվ համագործակցություն աշխատաշուկայի հետ. պրակտիկաների իրականացում, ավարտական աշխատանքների ղեկավարում:

## Դժվարություններ

1. Պլանավորված գործընթացների ամբողջությամբ իրականացման խնդիրներ: ՌԾ–ի որոշ գործողությունների հավակնորդ լինելը
2. Կրթական ծրագրի վերջնադյունքներին ամբողջությամբ հասնելու խնդիրներ:
3. **Moodle առցանց ուսուցման** համակարգի հնարավորությունների ոչ ամբողջական կիրառում դասախոսների կողմից:
4. Ուսանողների ցածր մոտիվացիա և ուսման ցածր առաջադիմություն:
5. Տեղացի կադրերի պակաս
6. Դասավանդման, ուսումնառության և գնահատման ժամանակակից մեթոդների ոչ լիարժեք կիրառում դասախոսների կողմից:
7. Հետազոտական և ավարտական աշխատանքների ղեկավարման գործընթացներում ոլորտի բարձրակարգ մասնագետների ներգրավման խնդիրներ:
8. Գիտահետազոտական գործունեության պասիվություն դասախոսական կազմի կողմից
9. Լսարանային ֆոնդի սակավությունը:

# Ձեռքբերումներ

Erasmus+ ծրագրով Լեհաստանի Հանրապետությունում (Պոմերանիայի համալսարան, քաղաք Սլուպսկ) ուսումնառություն է անցնել «Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանողուհի Ռայիսա Նիկոլայի Փիրումյանին:

2023թ.-ի սեպտեմբերի 25-ից հոկտեմբերի 12-ը Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դասախոս Վլադիմիր Պողոսյանը մեկնել է քաղաք Մոսկվա՝ «ՌԴ հաղորդակցության զարգացման ազգային գիտահետազոտական ինստիտուտ»-ի հրավերով: Վ. Պողոսյանը գործուղման ընթացքում անցել է 108 ակադեմիական ժամ տևողությամբ գիտական ստաժավորում՝ «Սառը պատերազմի ազդեցությունը Աֆղանստանի հասարակական-քաղաքական կյանքի վրա» թեմայով՝ պ.գ.թ., ՌԴ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող Օմար Նեսսարի ղեկավարությամբ: Այս համագործակցության արդյունքում պատրաստվել է գիտական հոդված, որը հրատարակվել է «Россия и мир: научный диалог-Russia & World: Sc. Dialogue» գիտական հանդեսում:

# Հաջորդիվ քայլեր

***Ֆակուլտետի գործունեությունն ակտիվացնելու, բարելավելու և նոր ձեռքբերումներ ունենալու համար պետք է օգտվել մի շարք հնարավորություններից.***

1. Առավել ինտենսիվ աշխատանք տանել տարածաշրջանի դպրոցների հետ՝ հստակ ժամանակացույցով:
2. Դպրոցներում ֆակուլտետի մասնագիտությունները ներկայացնել ակնարկային հետաքրքրաշարժ դասախոսություններով:
3. Կրթական ծրագրերի լավագույն շրջանավարտներին ուղղորդել շարունակական կրթության և նրանցով համալրել տեղացի դասախոսների համակազմը:
4. Ուղղորդվել շահակիցների կողմից ներկայացված աշխատաշուկայի պահանջարկով և մտածել ֆակուլտետի կողմից առաջարկվող մասնագիտությունների ցանկում փոփոխություն անելու վերաբերյալ՝ ուսումնասիրելով նյութատեխնիկական, բազային խնդիրները:
5. Հայագիտական կրթական ծրագրերն («Հայոց լեզու և գրականություն», «Պատմություն») ուժեղացնելու և հետաքրքրություն մտցնելու համար առաջարկել ամառային դպրոցի գաղափարը:
6. Նպաստել գիտակրթական միջազգային համագործակցությունների շարունակական դառնալուն:
7. Ապահովել դասախոսական կազմի կայունությունը:
8. Բարելավել կրթական ծրագրերը:
9. Դասախոսների և ուսանողների համար կազմակերպել գիտական սեմինարներ:
10. Ապահովել դասախոսների մասնակցությունը վերապատրաստման ծրագրերին:
11. Գտնել լրացուցիչ ֆինանսավորման աղբյուրներ:

# ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ